ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/7345/02/24 ք. Երևան
11 Սեպտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ Պետական վերահսկողական ծառայության՝ 15.08.2024թ.-ի՝ ՀՀ Պետական վերահսկողական ծառայության ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի արտահերթ նիստի որոշումն անվավեր ճանաչելու, անվավեր ճանաչել 26.08.2024թ.-ի ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի կողմից կայացված «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ Պետական վերահսկողական ծառայությունից պետք է պահանջել 15.08.2024թ.-ի ՀՀ Պետական վերահսկողական ծառայության ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի արտահերթ նիստի որոշման և 26.08.2024թ.-ի ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի կողմից կայացված «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Պետական վերահսկողական ծառայության՝ 15.08.2024թ.-ի՝ ՀՀ Պետական վերահսկողական ծառայության ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի արտահերթ նիստի որոշումն անվավեր ճանաչելու, անվավեր ճանաչել 26.08.2024թ.-ի ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի կողմից կայացված «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ Պետական վերահսկողական ծառայությունից պահանջել դատարան ներկայացնել 15.08.2024թ.-ի ՀՀ Պետական վերահսկողական ծառայության ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի արտահերթ նիստի որոշման և 26.08.2024թ.-ի ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի կողմից կայացված «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը ՀՀ Պետական

վերահսկողական ծառայության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի հոկտեմբերի 18-ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.09.11 11:25:42 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am